ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

15 մայիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ավագանու նստավայր

գ. Փամբակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը, Էմմա Գասպարյանը, Արշակ Սրապյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Նաիրա Հարությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Պավլիկ Պապինյանը և Արմենուհի Ոսկանյանը:

Նիստին նեկա էին աշխատակազմի պատասխանատուներ:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 13 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.05-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 10-12-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. ՄԱԶԾ կողմից իրականացվող «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագրին հավանություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

12. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 044-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի մայիսի 15-իթիվ 04 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիականանձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025թ-ի I եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

3. Փամբակ համայնքում 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների Փամբակ համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Հ. Մացակյան

4. Փամբակ համայնքում իրականացված «Զարդանախշերի երկխոսություն» ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով գորգագործության դասընթացներ իրականացնելու համար գումար հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

5. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

6. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությանբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Մարգո Ռաֆիկի Մելիքսեթյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Փամբակ համայնքի ավագանու 15.09.2023թ-ի թիվ 83-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. ՄԱԶԾ կողմից իրականացվող «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագրին հավանություն տալու մասին:

զեկ. Հ. Մացակյան

12. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին 2025թ-ի I եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է ընդունել ի գիտություն Փամբակ համայնքի բյուջեից 2025 թվականի I եռամսյակում Փամբակ համայնքի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, մասնավորապես՝ զոհված զինծառայողների, պատերազմի վետերանների, ռազմական գործողությունների արդյունքում անհետ կորած, հաշմանդամություն ստացած զինծառայողների և քաղաքացիական անձանց, ռազմական գործողությունների արդյունքում փախստական դարձած անձանց ընտանիքների, այդ թվում այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սոցիալապես անապահով դարձած ընտանիքներին հատկացված սոցիալական աջակցության վերաբերյալ հաղորդումը և հայտնեց, որ 2025թ-ի՛1-ին եռամսյակում համայնքի բյուջեից Լեռնապատ բնակավայրի բնակչուհի Վազգուշ Հակոբջանյանի թաղման ծախսերի փոխհատուցման նպատակով «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին է փոխանցվել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 045-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքում 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների Փամբակ համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ հավանություն Փամբակ համայնքում 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների, Փամբակ համայնքի բնապահպանական վճարների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագրին:

Համաձայն ծրագրի նախատեսվում է.

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքով անցնող Մ6 միջպետական նշանակության ավտոճանապարհին թվով 8 հատ կողային բարձմամբ աղբարկղերի տեղադրում և հետագա պլանավորված աղբահեռացման իրականացում «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի կողմից:

2. 17 ԿՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրում գործող կերաղաց-ալրաղացի տանիքին.

Ծրագրի նախահաշվային ընդհանուր արժեքը՝ կողային բարձմամբ թվով 8 աղբամանների գնումը (մեկ աղբամանի արժեքը՝ մոտ 84 000 ՀՀ դրամ) և 17 ԿՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի գնումը և տեղադրումը, կազմում է շուրջ 3 971 000 դրամ, որը համայնքին կտրամադրվի որպես բնապահպանական սուբվենցիա:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 046-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքում իրականացված «Զարդանախշերի երկխոսություն» ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով գորգագործության դասընթացներ իրականացնելու համար գումար հատկացնելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի կողմից ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացված «Զարդանախշերի երկխոսություն» ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով առաջարկում է համայնքի բյուջեից տրամադրել 1000000 /մեկ միլիոն/

ՀՀ դրամ՝ Փամբակ համայնքում 2025թ-ին մասնակցային բյուջետավորման գործընթացում ներկայացված «Գորգագործության / կարպետագործության դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով» առաջարկ-նախագիծը կյանքի կոչելու համար: Ծրագրի իրականացմամբ կապահովենք համայնքում բնակիչների մասնակցայնությունը, քանի որ առաջարկ-նախագծի համար քվեարկել է 138 բնակիչ և այն հաղթահարել է քվեարկության համար սահմանված նվազագուն շեմը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Մարգահովիտ և Լեռնապատ բնակավայրերում, ինչպես նաև Վահագնի բնակավայրում վերջերս բացված վերականգնողական-ուսումնական կենտրոնի շահառուների համար կազմակերպել գորգագործության և կարպետագործության եռամսյա անվճար դասընթացներ: Նախատեսված գումարով կիրականացվեն դասընթացավարի ծառայության մատուցման, նրա տեղափոխման տաքսի ծառայության մատուցման, թելերի և գործիքների ձեռք բերման գնման գործընթացներ: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 047-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.
Եկամուտների գծով մասնակցային բյուջետավորման համար տրամադրվող սուբվենիայի մասով ավելացնել 32.418.600 ՀՀ դրամ:
Օրենքով, իրավական ակտերով ավելացնել 8.023.717 ՀՀ դրամ, որպես զին. ծառայողների ընտանիքների երեխաների և հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար պետության կողմից տրամադրվող փոխհատուցման վճար:
Ծախսերի գծով՝
01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվի, 4111՝ աշխատակիցների աշխատավարձ հոդվածից պակասեցվել է 5.300.000 դրամ:
Նույն նախահաշվի 5122՝ վարչական սարքավորումներ հոդվածում ավելացնել 1.000.000 ՀՀ դրամ:
01.06.01՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ նախահաշվի, 5112՝ հոդվածում ավելացնել 15.000.000՝ Ձորագյուղի մշակույթի տան վերակառուցման համար:
04.05.01՝ ճանապարհային տրանսպորտ նախահաշվի, 4269 հոդվածում ավելացնել 300.000 դրամ՝ Փամբակ բնակավայրի տարածքով անցնող երկաթուղու հատվածում ճանապարհային անվտանգության հայելիների տեղադրման համար: Նույն նախահաշվի 5113 հոդվածում ավելացնել 3.080.000 ՀՀ դրամ՝ մասնակցային բյուջետավորմաբ իրականացվող ճանապարհի նորագման համար: Նույն նախահաշվի 5121 հոդվածում ավելացվել 34.000.000 ՀՀ դրամ մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրի՝ բազմաֆունկցիոնալ տրակտորի ձեռք բերման համար:

06.04.01՝ Փողոցային լուսավորության նախահաշվի, 4269՝ հոդվածում ավելացնել 850.000 ՀՀ դրամ՝ Արջուտ բնակավայրում փողոցային լուսավորության համակարգի նորոգման համար: 09.01.01՝ նախադպրոցական կրթություն նախահաշվի, 4637 հոդվածում ավելացվել է 8.023.717 դրամ, որպես ընթացիկ դրամաշնորհ մանկապարտեզներին՝/ որպես զին. ծառայողների ընտանիքների երեխաների և հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար պետության կողմից տրամադրվող փոխհատուցման վճար/: Նույն նախահաշվի 5113 հոդվածում ավելացնել 3.528.600 ՀՀ դրամ՝ մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված Ազնվաձորի նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի նորոգման համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 048-Ն/:

5. ԼՍԵՑԻՆ - 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությանբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Մարգո Ռաֆիկի Մելիքսեթյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանի 26.10.2023թ-ի վճիռը՝ օրինական ուժի մեջ մտած 28.11.2023թ.-ին (վարչական գործ ՎԴ6/0158/05/19), հիմք ընդունելով Մարգո Ռաֆիկի Մելիքսեթյանի ներկայացուցիչ Էլիտա Սպարտակի Մուրադյանի 02.05.2025թ-ի դիմումը և Լեռնապատ բնակավայրի բնակիչների հայտարարությունները, հաստատել այն փաստը, որ Վոլոդյա Աղասու Հակոբյանի (այսուհետ՝ հանգուցյալ մահացած 18.09.2018թ., ներկայումս՝ ընտանիքը գլխավորող Մարգո Ռաֆիկի Մելիքսեթյան) ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ ունեցել է բնակելի տուն Լեռնապատ համայնքում /ներկա հասցեն՝ Փամբակ համայնք գ. Լեռնապատ 6 փող. 18/, որը քանդվել է 1988թ-ի երկրաշարժի հետևանքով, իսկ նրա ընտանիքը բաղկացած է եղել 5 անձից.

1. Ինքը՝ Վոլոդյա Աղասու Հակոբյան, մահացած 18.09.2018թ.
2. Կինը՝ Մարգո Ռաֆիկի Մելիքսեթյան, ծնված 25.05.1961թ.
3. Աղջիկը՝ Նաիրա Վոլոդյայի Հակոբյան, ծնված 02.10.1982թ.
4. Տղան՝ Գրիգոր Վոլոդյայի Հակոբյան, ծնված 25.01.1984թ.
5. Աղջիկը՝ Նարինե Վոլոդյայի Հակոբյան, ծնված 23.12.1987թ.:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 049-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում թէ հաստիքային միավորների, թէ աշխատավարձի դրույքաչափերի, թէ ընդհանուր աշխատավարձի ֆոնդի փոփոխություն չի կատարվում: Նախկին հաստատված 39 դրույքային միավորները մնում են նույնը՝ նույն դրույքաչափերով: Փոփոխություն է կատարվում միայն հաստիքի անվանման մեջ՝ նախկինում նախատեսված «Տրակտորիստ էքսկավատորի» անվանումը փոփոխվում է «Տրակտորիստ բուլդոզերի» անվամբ՝ նույն աշխատավարձի չափի պահպանմամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 050-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 15.09.2023թ-ի թիվ 83-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Հաշվի առնելով Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ռոզա Փարեմուզյանի առաջարկությունը, այն հանգամանքը, որ մանկապարտեզի լիցենզավորման գործընթացում ի հայտ է եկել փաստաթղթային անհամապատասխանություն կանոնադրության և սեփականության իրավունքի գրանցման վկայականի հասցեագրման մեջ, զեկուցողը առաջարկեց Փամբակ համայնքի ավագանու 15.09.2023թ-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 83-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, հավելվածով հաստատված կանոնադրության 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3. Հաստատության գտնվելու վայրն է՝ մարզ Լոռի, համայնք Փամբակ, գյուղ Վահագնաձոր 3-րդ փողոց 9 մանկապարտեզ:», ինչպես որ գրված է սեփականության իրավունքի գրանցման վկայականում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 051-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Սևակ Սամվելի Անանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, առաջարկում է տալ համաձայնություն Սամվել Սուրենի Անանյանին, Էլինա Սիրեկանի Հովհաննիսյանին, Սևակ Սամվելի Անանյանին և Անժելա Սամվելի Անանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-070-0334-0006 ծածկագրով 0,5567 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը, ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով, ջրային նպատակային նշանակության, ջրային հողերի գործառնական նշանակության հողերի կատեգորիա փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 052-Ա/: Ավագանու անդամ Սամվել Անանյանը չի մասնակցել քվեարկությանը:

9. ԼՍԵՑԻՆ - ՄԱԶԾ կողմից իրականացվող «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագրին հավանություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ)՝ ՀՀ-ում Սերբիայի կառավարության և ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մեկնարկել է «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ՄԱԶԾ-ի և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի համագործակցությամբ նոր բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի վերանորոգում Ձորագետ բնակավայրում, որտեղ կմատուցվեն մշակութային, թատերական, արվեստի և կրթական բաղադրիչներ ունեցող արտադպրոցական ծառայություններ: Բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի նախագծային արժեքը կազմում է շուրջ 75000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Համայնքի կողմից ներդրման չափը կազմում է 10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ, իսկ ՄԱԶԾ մասնաբաժինը կազմում է 50000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

ՄԱԶԾ կողմից իրականացվող միջազգային գնումների գործընթացի հայտերի ամփոփման արդյունքում հնարավոր է առաջանա լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն համայնքի կողմից: Նման դեպքերում համայնքի կողմից լրացուցիչ ֆինանսավորման առավելագույն սահմանաչափը հնարավոր է կազմի մինչև 5000000 ՀՀ դրամ:
Հաշվի առնելով, որ կարիքների գնահատման և նախնական հաշվարկների փուլը հաջողությամբ ավարտված է, զեկուցողը առաջարկեց տալ հավանություն ծրագրի իրականացմանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 053-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Միքաել Ալբերտի Միքաելյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, առաջարկում է թույլատրել Միքաել Ալբերտի Միքաելյանին սեփականության իրավունքով պատկանող 06-103-0136-0007 ծածկագրով 0,053406 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության, խոտհարքը՝ սպանդանոց կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 054-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի հունիսի 24-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 055-Ա/:
Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի հունիսի 24-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ